ԹԵՄԱ 3 ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ 3.3. ԱՄՆ: Բնակչությունը, տնտեսությունը

• • •

Եթե մինչև XIX դարը ներգաղթողների մեջ գերակշռում էին անգլիացիները, շոտլանդացիները, իռլանդացիները, ապա հետագայում մեծ թիվ կազմեցին եվրոպական այլ երկրներից, II աշխարհամարտից հետո՝ Լատինական Ամերիկայից եկածները: Ամերիկյան ազգի ձևավորմանը մասնակցել են նաև Աֆրիկայից բերված նեգրերը և ասիական երկրներից ներգաղթածները: Այսպիսով, ժամանակակից *ամերիկյան ազգը ձևավորվել է բազմաթիվ ժողովուրդների և ռասաների միախառնման արդյունքում*: ԱՄՆ-ում ապրում են 100-ից ավել ժողովուրդների ներկայացուցիչներ:

• • •

Նախկինում սևամորթների հիմնական մասն ապրում էր երկրի հարավում, այսպես կոչված՝ «սև գոտում» և հիմնականում զբաղված էր գյուղատնտեսությամբ: Վերջին տասնամյակներում շատ սևամորթներ վերաբնակվեցին հյուսիսի և արևմուտքի խոշոր քաղաքներում:

Սպիտակամորթները կազմում են բնակչության 76%-ը: 1950 թ-ից հետո մուլատները չեն առանձնացվում: Դեղին(մոնղոլոիդ) ռասայի բաժինը 0,6% է:

Պետական լեզուն անգլերենն է, տիրապետող կրոնը քրիստոնեությունը՝ կաթոլիկություն և բողոքականություն ուղղություններով:

ԱՄՆ-ը խտաբնակ երկիր չէ, բնակչության միջին խտությունը զարգացած շատ երկրների համեմատ ցածր է: Համեմատաբար խտաբնակ են երկրի արևելյան և մերձլճային նահանգները, նոսր են բնակեցված լեռնային նահանգները՝ 2-3 մարդ քառ. կմ: Ալյասկան՝ 1 մարդ 5 քառ. կմ:

• • •

Քաղաքային խոշոր ագլոմերացիաների՝ **մեգապոլիսների** կուտակման արդյունքում ձևավորվել են բազմակենտրոն մեգապոլիսներ՝ **մեգալոպոլիս-ներ:** ԱՄՆ-ում ձևավորվել է 3 մեգալոպոլիս՝ **Բոսվաշ** կամ **Մերձատլանտյան**, **Չիփիտս** կամ **Մերձլճային**, **Սան Սան** կամ **Մերձխաղաղօվկիանոսյան**: Խոշորագույնը Բոսվաշն է՝ 60 մլն. բնակչությամբ (Բոսթոն, Նյու Յորք, Ֆիլադելֆիա,Բալթիմոր, Վաշինգտոն): Չիփիտս -Չիկագո, Դեթրոյտ, Քլիվ-լենդ, Փիթսբուրգ: Սան Սան - Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես, Սան Դիեգո: Բացառիկ դեր ունի մայրաքաղաք **Վաշինգտոնը**: Բնակչության թվաքանակը 720 հազար է, այն աշխարհի հզորագույն երկրի մայրաքաղաքն է, քաղա-քական, գիտական ու մշակութային խոշոր կենտրոն:

• • •

Երկրի տնտեսությունը զարգացման այսպիսի բարձր մակարդակի հա-սել է բարենպաստ ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի, հարուստ և բազմատեսակ բնական ռեսուրսների, հսկայական աշխատանքային ռեսուրսների (այդ թվում՝ աշ-խատունակ բնակչության զանգվածային ներգաղթի), ազատ շուկայական հարաբերությունների խորացման շնորհիվ: Տնտեսությունը զարգացման առանձնահատուկ գործոն է, որ ԱՄՆ-ը աշխարհի միակ երկիրն է, որի տնտեսությունը երկու աշխարհամարտերի ժամանակ ոչ միայն չտուժեց, այլև՝ ավելի զարգացավ: *Ինչու՞*:

• • •

Արդյունաբերությունը: Ճյուղի արտադրանքի արժեքը գյուղատնտե-սությանը գերազանցում է 15 անգամ: Զարգացած են բոլոր **ճյուղերը** և **ենթաճյուղերը**: Մեծ է մշակող արդյունաբերության բաժինը՝ 80%: Բարձր է աշխատանքի արտադրողականությունը, ինչը պայմանավորված է ավտո-մատացմամբ, համակարգիչների համընդհանուր կիրառմամբ, աշխատանքի ճիշտ կազմակերպման մակարդակով և այլն:

• • •

Երկրի էներգետիկ հաշվեկշռում առաջատար են նավթը և գազը: Էլեկտ-րաէներգետիկայի առաջատար ենթաճյուղերն են ջերմաէներգետիկան (ար-տադրվող էլեկտրաէներգիայի զգալի մասը բաժին է ընկնում ջէկ-երին): Կոլումբիա գետի վրա կառուցված է ջրաէլեկտրակայանների՝ աշխարհում

ամենահզոր կասկադը՝ 20 մլն. կվտ ընդհանուր հզորությամբ (ամենախոշոր ջրէկ-ը՝ Գրանդ Կուլի), ատոմային էներգետիկան իր հզորությամբ ամենամեծն է աշխարհում:

• • •

ԱՄՆ-ը բարձր ուրբանացված երկիր է՝ 82,7%: Շատ են **խոշոր և գերխոշոր** քաղաքները՝ **Նյու Յորք**, **Չիկագո**, **Լոս Անջելես**, **Ֆիլադելֆիա**, **Բոստոն**, **Դետրոյթ:** ԱՄՆ-ում ուրբանացումը թևակոխել է իր զարգացման բարձրագույն փուլը: Եթե մինչև 70-ական թվականները տարածված էր **սուբուրբանացումը** (քաղաքների աճը արվարձանների ընդարձակման հաշվին), ապա դրան հաջորդեց **ռուրուրբանացումը**, այժմ՝ **սուպերուրբանացումը** (վերհիշեք հասկացություններ, բացատրեք գործընթացի ուժեղ և թույլ կողմերը): Քաղաքաբնակների մեծ մասը կենտրոնացված է քաղաքային խոշոր ագլոմերացիաներում:

• • •

ԱՄՆ-ը աշխարհի՝ տնտեսապես ամենահզոր երկիրն է, որն արդյունաբերության, գյուղատնտեսության արտադրանքի ծավալով ու արտահանմամբ, գիտատեխնիկական ներուժով և ծառայությունների ոլորտի զարգացման մակարդակով իրեն հավասարը չունի: Այս երկրում է ստեղծվում **Համաշխարհային ՀՆԱ-ի 1/5 մասը**: ՀՆԱ-ն 26940 մլրդ դոլար է, մեկ շնչին բաժին ընկնողը՝ 80412 դոլար: ԱՄՆ-ի ազգային դրամը դարձել է համաշխարհային արժույթ, աշխարհի 500 խոշոր դրամատների (բանկերի 25%-ը) ամերիկյան է: Այս ամենը օրինաչափորեն վկայում են, որ շատ բարձր է բնակչության կենսամակարդակը:

Երկրի տնտեսական զարգացմանը նպաստել են բարենպաստ աշխարհագրական դիրքը, բնական և աշխատանքային ռեսուրսները:

ԱՄՆ-ի տնտեսությանը բնորոշ է արտադրության և կապիտայի համակենտրոնացման բարձր աստիճանը: 500 խոշոր մենատիրություններ (մոնոպոլիաներ) մատակարարում են արդյունաբերական համախառն արտադրանքի կեսից ավելին: Խոշոր մենատիրություններ են «Բոինգ» ինքնաթիռաշինական, «Ջեներալ էլեկտրիկ» (էլեկտրատեխնիկական), «Յունիոն Կարբայդ» (քիմիական) և այլն:

• • •

Գլխավոր նահանգը **Միչիգանն** է, «ավտոմոբիլաշինության մայրաքա-

ղաքը»՝ Դետրոյթը: Ավտոմոբիլաշինական խոշոր մենատիրություններն են «**Ֆորդ մոթորսը**», «**Ջեներալ մոթորսը**»: Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի արտադրությամբ առաջատար են «**Այ Բի Էմ**», «**Մայքրոսոֆտ**» և «**Էյփլ**» ընկերությունները:

• • •

Շրջակա միջավայրն առանձնապես մեծ չափով աղտոտող ճյուղերն են հանքարդյունաբերությունը, մետաղաձուլությունը, քիմիական արդյունաբերությունը, որոնք զարգացած ճյուղեր են, իսկ մետաղաձուլությունը և քիմիական արդյունաբերությունը մեծ բաժին ունեն արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալում: